ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

« » _____ 2017թ.

N: _____

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-27-95, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի գրադարանավարներ.

Ընդունեք իմ շնորհավորանքները և ջերմ բարեմաղթանքները Ձեր մասնագիտական տոնի՝ Գրադարանավարի օրվա կապակցությամբ:

Հայ ժողովուրդը իր բազմադարյա պատմության քառուղիներում միշտ գրի ու գրքի հանդեպ առանձնակի ակնածանք ու սեր է ունեցել, ինչի շնորհիվ էլ պահպանել է իր ազգային ինքնությունը, ինչպես նաև համաշխարհային մշակույթի ու արվեստի մեջ իր ուրույն տեղն է ունեցել:

Գիտելիքի ու գրքի հանդեպ սերն է մեր ազգին օգնել անցնելու դարերի միջով, հաղթահարելու ծանր և դժվար շատ օրեր և ամրապնդելու իր կամքը, ազատասիրական ոգին:

Շիրակի մարզի գրադարանների աշխատակիցներն իրենց կյանքի մեծ մասը նվիրել են գրադարանային գործին, տարիներ շարունակ իրենց ուսերին տարել են ծանր և պատվավոր պարտականությունը, ապահովել են հասարակության տեղեկացվածությունը, պահպանել և սերունդներին են փոխանցել գիրքը և գիտելիքը:

Հարգելի գրադարանավարներ, ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն, անձնական երջանկություն և հաջողություններ աշխատանքում:

Հարգանքով՝

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

/պաշտոնակատար/